ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մոլդովական փողոցի հ.47/7 հասցեում գտնվող 0.46659 հա, ինչպես նաև Նուբարաշեն վարչական շրջանում առանձնացված 22.95077 հա մակերեսներով պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները փոխադրել «բնակավայրերի» նպատակային նշանակության հողերի կատեգորիա։

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան քաղաքի Մոլդովական փողոցի հ. 47/7 հասցեում գտնվող 0.46659հա և Նուբարաշեն վարչական շրջանում առանձնացված 22.95077 հա մակերեսներով պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» նպատակային նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու խնդրանքով:

Մոլդովական փողոցի հ. 47/7 հասցեում գտնվող հողամասը հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության սեփականությունը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 27062014-01-0112 վկայական/ և պետական գրանցում է ստացել հատուկ նշանակության նպատակային նշանակությամբ, սակայն գտնվում է բնակելի նշանակություն ունեցող հատվածում, շրջապատված է նախարարությանը պատկանող բազմաբնակարան շենքերով և փոփոխության արդյունքում նախատեսվում է իրականացնել հանգստի և ժամանցի գոտի, որը հնարավորություն կտա տվյալ մասում ունենալ քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված հատված:

Նուբարաշեն վարչական տարածքում գտնվող 22.9507 հա մակերեսով հողամասը հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության նախկին զորամասի տարածք, որը ներկայումս չի գործում ՝ ըստ նպատակային նշանակության չի օգտագործվում և Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն նրա մի մասը գտնվում է անցումային բուֆերային հատվածում, որը ներառում է բնակելի, հասարակական և խառը կառուցապատում, իսկ մյուս մասը արդյունաբերական օբյեկտների գոտում է: Նշված հողամասում նախարարության կողմից հետագայում նախատեսվում է իրականացնել բնակելի բազմաբնակարան շենքի կառուցում, զինծառայողների և զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանների ապահովման համար:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 8-րդ կետի՝ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և վերջինիս կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԸՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ